Assocation of the European and Armenian Experts e.V.
(Verband der Europäischen und Armenischen Fachleute e.V.)

Linienstrasse 126, D-10115 Berlin • Tel./Fax: +49(0)30 830 33 416 • info@aeae.eu

Միության կանոնադրություն

§ 1 Անվանումը, նստավայրը, գրանցումը, գործող տարին

(1) Միությունը կրում է «Association of the European and Armenian Experts e.V.“, կրճատ՝ AEAE , (Verband der Europäischen und Armenischen Fachleute e.V., կրճատ՝ VEuAF), (Հայ և Եվրոպացի Մասնագետների Ասոցիացիա հ/կ - ՀԵՄԱ)

(2) Միության նստավայրը՝ ք. Բեռլին:

(3) Միությունը գրանցված է միությունների ռեգիստրում:

(4) Միության գործող տարին օրացույցային տարին է:

(5) Միությունը հետապնդում է միայն և անմիջական հանրօգուտ ու բարեգործական նպատակներ՝ համաձայն տուրքերի տրման <<հարկազերծված նպատակներ>> կարգի:

§ 2 Միության նպատակը

(1) Միության նպատակը կայանում է Գերմանիայում, Եվրոպայում, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի տարածքում, ինչպես նաև այսպես կոչված <<Հայկական Սփյուռքում>> մարդկանց համախմբման մեջ՝ աջակցելով տարբեր մշակույթների միջև փոխըմբռնմանը և հատկապես նպաստելով՝

a. արվեստին և մշակույթին

b. զարգացման նպատակով փոխհամագործակցությանը

c. գիտությանը և հետազոտությանը

d. դաստիարակությանը, ժողովրդական և մասնագիտական կրթությանը՝ ներառյալ ուսանողներին օգնություն ցուցաբերելուն

e. կրոնին

f. պատանիներին և ծերերին

g. ճարտարապետական նշանակության հուշարձանների պահպանմանն ու նրանց խնամքին

h. ամուսնությանն ու ընտանիքին

i. սպորտին (շախմատը համարվում է սպորտ)

j. նախատեսված օրենքների սահմաններում ժողովրդավարական պետականությանը, այս պարագայում խոսքը չի վերաբերվում այն նկրտումներին, որոնք միայն քաղաքացիական տիպի անհատական շահեր են հետապնդում կամ սահմանափակվում են կոմունալ քաղաքական ոլորտով

k. քաղաքացիական նախաձեռնություններին՝ ի շահ հանրօգուտ, բարեգործական և եկեղեցական նպատակների:

(2) Կանոնադրության նպատակը հատկապես իրագործվում է.

a. արվեստի ցուցահանդեսներ, մշակութային միջոցառումներ, միջազգային և ազգային կոնֆերանսներ կազմակերպելու և անցկացնելու միջոցով,

b. ի սեր կարիքավոր անձանց հանգանակություններ հավաքելու, մարդասիրական նպատակներով օգտակար բեռներ հավաքելու և տեղափոխելու միջոցով,

c. միջմշակութային հանդիպումներ, միջազգային սեմինարներ, երկխոսության հարթակներ կազմակերպելու և անցկացնելու, ինչպես նաև Եվրոմիության երկրներում, հատկապես Գերմանիայում և արտասահմանում այլ միությունների, հիմնադրամների, համալսարանների և կազմակերպությունների միջոցառումներին մասնակցելու և վերջիններիս հետ համագործակցելու միջոցով, օրինակ՝

- գեղանկարչության ցուցահանդեսներին (Էքսպրեսիոնիզմ, Իմպրեսիոնիզմ և այլն)

- ֆիլմեր ցուցադրելով (գերմանական և միջազգային արտադրության)

-թատերական բեմականացումներում (դասական, սուռռեալիստական մոտիվներով և այլն)

- համերգային երեկոներին (մենակատարներ, երգչախմբեր, անսամբլներ և այլն)

- դասախոսություններին (գրականություն, պատմություն, մաթեմատիկա և այլն)

- սպորտային միջոցառումներին (ֆուտբոլ, բռնցքամարտ և այլն)

- և այլն...

d. Ինքնությունը պահպանող լեզվի, երաժշտության, պատմության և կրոնի դասընթացների կազմակերպման և անցկացման օգնությամբ:

§ 3 Անանձնականություն

(1) Միությունը գործում է անանձնական սկզբունքով, այն առաջին հերթին հետապնդում է ոչ անձնական տնտեսական նպատակներ:

(2) Միության միջոցները կարելի է միայն օգտագործել կանոնադրությանը հարիր նպատակների համար:

(3) Անդամները չեն ստանում միության միջոցներից նվիրատվություններ:

(4) Ոչ մի անձ իրավունք չունի կատարել ծախսեր, որոնք միության նպատակին խորթ են, կամ ստանալ անհամամասնորեն խոշոր չափի վարձատրություն:

§ 4 Անդամների տեսակները և ձայնի իրավունքը

(1) Միության անդամները խմբավորվում են հետևյալ տեսակների.

a. կանոնավոր անդամներ, այդ թվում՝ հիմնադիր անդամներ,

b. նպաստող անդամներ,

c. պատվավոր անդամներ:

(2) Յուրաքանչյուր կանոնավոր անդամ ունի մեկ ձայնի իրավունք, որը չի փոխանցվում:

§ 5 Անդամակցություն

(1) Միության անդամ կարող է դառնալ յուրաքանչյուր բնական և իրավաբանական անձ, ով օժանդակում է նրա նպատակների իրականացմանը:

(2) Միությանը անդամակցելու դիմումի հարցը որոշում է վարչությունը:
(3) Դիմորդը միությանը անդամակցելու պահանջով հանդես գալու իրավունք չունի: Պատվավոր անդամակցությունը տրվում է վարչության կողմից:

(4) Անդամակցությունն ավարտվում է միությունից ինքնակամ դուրս գալով, հեռացմամբ կամ մահով:

(5) Անդամի միությունից ինքնակամ դուրս գալը հնարավոր է միայն հաջորդ ամսի առաջին օրը: Այն կատարվում է վարչությանը գրավոր հայտարարություն ներկայացնելուց հետո՝ պահպանելով չորսշաբաթյա ժամկետը:

(6) Յուրաքանչյուր անդամ կարող է վարչության կողմից գրավոր հիմնավորմամբ անմիջապես հեռացվել: Սակայն հեռացման որոշումն ընդունելուց առաջ անդամին պետք է տրվի հնարավորություն արդարանալու կամ թերևս իր դիրքորոշումն այս կապակցությամբ արտահայտելու:

§ 6 Անդամավճարները

(1) Անդամների ժողովը որոշում է անդամավճարներ սահմանելու կարգը:

(2) Տարեկան անդամավճարները պետք է միանվագ վճարվեն վաղօրոք ամբողջ տարվա համար:

(3) Միությունից դուրս գալուց անդամը իրավունք չունի միությանը ներկայացնել անդամավճարը կամ այլ նվիրատվությունները ետ ստանալու պահանջ:

§ 7 Միության մարմինները

Միության մարմիններն են.

a) Անդամների ժողովը,

b) Վարչությունը,

c) Նախագծային թիմերը:

§ 8 Վարչությունը

(1) Վարչությունը բաղկացած է 7 անձանցից:

Զբաղեցվում են հետևյալ պաշտոնները.

Վարչությունը կարող է նշանակել անդամներ, ովքեր պատասխանատու են ներքոհիշյալ 5 ոլորտների համար.

I. Հումանիտար գիտություն

II. Տեխնիկա և բնագիտություն

III. Մշակույթ

IV. Արդյունաբերություն, առևտուր և սպասարկում

V. Ճարտարապետություն և շինարարություն:

2 անձիք ընտրվում են որպես վարչության փոխարինող անդամներ, ովքեր վարչության մշտական այս կամ այն անդամի հիվանդության, հրաժարականի կամ հեռացվելու դեպքում փոխարինում են նրան և ստանձնում վերջինիս իրավունքներն ու պարտականությունները:

(2) Վարչությունը պարզ մեծամասնական սկզբունքով ազատ ընտրում է վարչության 1-ին նախագահ, վարչության 2-րդ նախագահ, գանձապահ, քարտուղար, մշակույթի հանձնակատար և վարչությանը փոխարինող երկու անդամներ, ովքեր § 8(1) -ում ներկայացված հինգ ոլորտների կոորդինացման և ղեկավարման նպատակով բաժանվում են համապատասխանաբար վերոնշյալ հինգ ոլորտների վրա:

(3) Վարչության 1-ին նախագահը, վարչության 2-րդ նախագահը և գանձապահը ներկայացնում են վարչությունը՝ համաձայն ԳԴՀ Քաղ. օրենսգրքի § 26-ի: Նրանցից ցանկացած երկուսը դատական կամ արտադատական կարգով ներկայացնում են միությունը միասնաբար:

(4) Վարչությունը պարզ մեծամասնական սկզբունքով ազատ ընտրվում է անդամների ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Վարչության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Եթե անդամների բոլոր ձայների պարզ մեծամասնություն չի ապահովվում և տեղի չի ունենում արդյունավետ ընտրություն, ապա 6 շաբաթ հետո հրավիրվում է ևս մեկ անդամների ժողով, որտեղ տրված ձայների պարզ մեծամասնությամբ կհետևի ընտրությունը:

(5) Վարչությանը վերապահված են միության ընթացիկ գործերի քննումը, այդ թվում նախագծերի ընդունումը և հանձնումը, վերջիններիս միջնորդավորումը, ինչպես նաև նախագծերին մասնակցության մրցույթային կարգով հայտարարագրումը:

(6) Վարչության նիստերն անցկացվում են նվազագույնս եռամսյակը մեկ անգամ: Վարչության նիստի հրավերը կատարվում է գրավոր կարգով և այն առաքվում է վերջին հայտնի հասցեին կամ էլեկտրոնային փոստին փոստային ճանապարհով կամ էլեկտրոնային տարբերակով՝ պահպանելով հրավերի երկշաբաթյա ժամկետը և միևնույն ժամանակ վաղօրոք ներկայացնելով նիստի օրակարգը:

Ժամկետի հաշվարկը սկսվում է հրավերն ուղարկելուց հետո հաջորդ օրը: Հիմք ընդունվում է փոստային կնիքի վրա դրոշմված ամսաթիվը: Գրավոր հրավերը համարվում է վարչության անդամի կողմից ստացված, եթե այն ուղղված է եղել միության վարչության անդամի կողմից ներկայացրած վերջին հասցեին:

(7) Վարչության անդամները կարող են մասնակցել վարչության նիստերին էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի միջոցով (Skype, MSN և այլն) և թերևս այսպիսով ընկալելու քվեարկության իրենց իրավունքներն ու պարտականությունները: Պահանջի դեպքում ստորագրությունները կարող են տրվել փոստային առաքման ճանապարհով կամ էլեկտրոնային տարբերակով՝ պահպանելով այն հետ ուղարկելու առնվազն մեկշաբաթյա ժամկետը:

(8) Վարչությունը որոշումներն ամրագրում է գրավոր կարգով ձայների պարզ մեծամասնությամբ և այդ մասին տեղեկացնում միության անդամներին:

(9) Վարչությունը իրավունք ունի նշանակել պաշտոնապես գործող տնօրինություն:

§ 9 Վարչության գործունեության դադարեցումը

(1) Համաձայն ԳԴՀ Քաղ. օրենսգրքի § 27 պարբ. 2 դրույթ 2-ի վարչության գործունեության դադարեցման համար կարևոր հիմք են ծառայում միայն միության նպատակների կոպիտ անտեսումը, որը հանգեցրել է միությանը կորուստների, ինչպես նաև վարչության կողմից միության անդամներին կանխամտածված խաբեությամբ մոլորեցնելը և հանցանք կատարելու դեպքում համաձայն ԳԴՀ Քրեական օրենսգրքի դատարանի կողմից օրենքի ուժով դատապարտվելը:

(2) Վարչության պաշտոնավարող անդամն այնքան ժամանակ կմնա իր պաշտոնին, մինչև կընտրվի նոր վարչություն և վերջինս կկարողանա ընդունել իր պաշտոնը:

§ 10 Անդամների ժողով

(1) Անդամների ժողովը կառավարում է ժողովի նախագահը: Ժողովի նախագահը պարտավոր է լինել միության անդամ: Անդամների ժողովը ընտրում է քարտուղար, ով պատրաստում է անդամների ժողովի արձանագրություն:

(2) Անդամների ժողովն ունի հետևյալ առաջադրանքները.

a) ընտրել միության վարչություն,

b) ի գիտություն ընդունել վարչության 1-ին նախագահի և գանձապահի հաշվետվությունները,

c) որոշել վարչության լուծարումը,

d) ընդունել տարեկան բյուջեն,

e) վարչության առաջարկությամբ սահմանել անդամավճար (ըստ §6-ի),

f) որոշել կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին,

g) ընտրել միության պատվավոր անդամներ:

(3) Անդամների ժողովը հրավիրվում է տարին մեկ անգամ:

(4) Անդամների արտահերթ ժողով հրավիրվում է միայն այն դեպքում, եթե այն բխում է միության շահերից, որոնք ներկայացնում է միության վարչությունը կամ եթե հրավերի գրավոր պահանջով հանդես են գալիս միության կանոնավոր անդամների առնվազն մեկ երրորդը՝ այնտեղ նշելով պատճառները և նպատակը:

(5) Անդամների ժողովի հրավերը կատարվում է գրավոր կարգով: Այն առաքվում է վերջին հայտնի հասցեին կամ էլեկտրոնային փոստին փոստային ճանապարհով կամ էլեկտրոնային տարբերակով՝ պահպանելով հրավերի առնվազն երեք շաբաթյա ժամկետը և միևնույն ժամանակ վաղօրոք ներկայացնելով ժողովի օրակարգը: Ժամկետի հաշվարկը սկսվում է հրավերն ուղարկելուց հետո հաջորդ օրը: Հիմք է ընդունվում փոստային կնիքի վրա դրոշմված ամսաթիվը: Գրավոր հրավերը համարվում է միության անդամի կողմից ստացված, եթե այն ուղղված է եղել միության անդամի կողմից ներկայացրած վերջին հասցեին:

(6) Անդամների ժողովը որպես միության գերագույն որոշում կայացնող մարմին իրավասու է սկզբունքորեն բոլոր առաջադրանքների համար, եթե որոշ առաջադրանքներ համաձայն այս կանոնադրության միության այս կամ այն մարմնին արդեն չեն փոխանցվել:

(7) Անդամների ժողովը ապահովում է քվորում, եթե ժողովին ներկա են անդամների առնվազն մեկ հինգերորդը:

(8) Որոշումները, այդ թվում նաև նրանք, որոնք գրավոր ճանապարհով են կազմվում, պահանջում են տրված ձայների պարզ մեծամասնությունը: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է ժողովի նիստի նախագահի ձայնը: Կանոնադրության փոփոխությունները պահանջում են տրված ձայների երկու երրորդը: Յուրաքանչյուր անդամ կարող է իր ձայնը գրավոր լիազորագրով փոխանցել մեկ այլ անդամի, այնուամենայնիվ

ներկա անդամն իրավունք չունի հինգից ավելի բացակայող անդամների ձայները ներկայացնել:

(9) Որևէ հարցի շուրջ, ինչը դրված չի եղել ժողովի նիստի օրակարգում, կարող է անդամների ժողովը որոշում կայացնել միայն այն դեպքում, եթե ձայնի իրավունք ունեցող ներկա անդամներից երկու երրորդը տալիս է իր համաձայնությունն այդ կապակցությամբ:

(10) Յուրաքանչյուր անդամների ժողովի որոշումների վերաբերյալ պատրաստվում է արձանագրություն, ինչը պետք է ստորագրի ժողովի նախագահը:

§ 11 Նախագծային թիմեր

(1) Նախագծային թիմերը կազմվում են վարչության կողմից: Նրանց մասնագիտական պիտանիության սկզբունքով կոչված են աջակցելու միության նպատակների կատարմանը:

(2) Նախագծային թիմերը բաժանվում են հետևյալ ոլորտների.

I. Հումանիտար գիտություն

- քաղաքագիտություն և հասարակագիտություն
- պատմություն, փիլիսոփայություն
- բանասիրություն
- գրավոր և բանավոր թարգմանություններ
- մանկավարժություն և հոգեբանություն
- լրագրություն և հրապարակախոսություն
- իրավագիտություն և իրավաբանություն
- աստվածաբանություն, միջեկեղեցական կապեր

II. Տեխնիկա և բնագիտություն

- ինֆորմատիկա
- մաթեմատիկա
- ֆիզիկա և աստրոֆիզիկա
- քիմիա
- կենսաբանություն
- բժշկագիտություն և ժողովրդական բժշկություն
- ճարտարագիտություն (ինժեներիա) և մեխանիկա

III. Մշակույթ

- գրողներ և բանաստեղծներ
- երաժիշտներ
- գեղարվեստ
- ֆոտոարվեստ և վավերագրություն
- ֆիլմ և բեմարվեստ (թատրոն)
- սպորտ

IV. Արդյունաբերություն, առևտուր և սպասարկում

- արդյունաբերություն
- ֆինանսներ և բանկեր
- մեծածախ առևտուր
- մանրածախ առևտուր և փոքր ձեռնարկություններ
- արհեստագործություն և անհատ ձեռներեցներ
- հրատարակչություն և հրատարակչական գործ
- այլ սպասարկման ոլորտի ծառայություններ

V. Ճարտարապետություն և շինարարություն

- ճարտարապետություն, շինարարական ինժեներիա
- շինարարական ձեռնարկություններ
- փոքր շին. ձեռնարկություններ և անհատ արհեստավորներ

(3) Յուրաքանչյուր նախագծային թիմ ունի նախագծի ղեկավար, ով 5 տարի ժամկետով նշանակվում է վարչության կողմից: Նախագծի ղեկավարը կարող է առանց հիմնավորման վարչության կողմից ցանկացած ժամանակ հետ կանչվել:

(4) Նախագծի ղեկավարը ինքնուրույն կազմում է իր նախագծային թիմը՝ հաշվի առնելով թիմի անդամների մասնագիտական իրավասությունները: Նա իր գործունեության շրջանակում պատասխանատու է այս կամ այն նախագծի համար:

(5) Նախագծի ղեկավարն իրեն իրավունք է վերապահում նշանակելու թիմի անդամներ, վերջիններիս ազատելու իրենց պարտականություններից թերևս նրանց նաև փոփոխելու:

(6) Նախագծի ղեկավարը պարտավոր է եռամսյակը մեկ գրավոր կարգով իր թիմի գործունեության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել վարչությանը:

§12 Կանոնադրության փոփոխում

(1) Յուրաքանչյուր որոշման համար, որը պահանջում է կանոնադրության փոփոխություն, անհրաեշտ է տրված ձայների երկու երրորդ

մեծամասնությունը: Կանոնադրության փոփոխությունների մասին կարող է միայն քվերակվել անդամների ժողովում, եթե այդ մասին վաղօրոք գրավոր կարգով տեղյակ է պահվել անդամների ժողովի հրավերում և եթե այդ հրավերին կցվել են ինչպես առկա գործող կանոնադրությունը, այնպես էլ նրա փոփոխված տեքստի նախատեսված տարբերակը:

(2) Կանոնադրության այն փոփոխությունները, որոնք ենթակա են կատարման վերահսկիչ, դատական կամ ֆինանսական պետական մարմինների պահաջով, վարչությունը կարող է անձամբ ստանձնել և կատարել: Կանոնադրական այդ փոփոխությունները պետք է հնարավորինս շուտ գրավոր կարգով հայտնել միության բոլոր անդամներին:

§ 13 Որոշումների փաստագրում

Վարչության նիստերում և անդամների ժողովներում ընդունված որոշումները պետք է գրավոր կարգով արձանագրել և վարչությունը դրանք պետք է ստորագրի:

§ 14 Միության լուծարումը և նրա ունեցվածքի ամրագրումը

(1) Միության կազմալուծման համար անհրաժեշտ է անդամների ժողովին ներկա կանոնավոր անդամների երեք քառորդ ձայների մեծամասնությունը: Որոշումը կարող է միայն ընդունվել անդամների ժողովի հրավերի մասին վաղորոք նախատեսված ժամկետում արված գրավոր հայտարարությամբ:

(2) Միության լուծարման կամ կազմալուծման ժամանակ կամ վերջինիս նպատակների հանրօգուտության կորստի դեպքում միության ունեցվածքն անցնում է Գերմանիայի Հայ Առաքելական Եկեղեցու Թեմ հ/կ միությանը, որը ուղղակի և բացառապես պարտավոր է այն կիրառել հանրային, բարեգործական կամ եկեղեցական նպատակներով:

ք. Բեռլին, 19.10.2012թ.

նորացված՝ 15.03.2013թ.-ին
նորացված՝ 09.06.2013թ.-ին

Հարգանքներով՝

Վարչություն

Assocation of European and Armenian Experts e.V. - AEAE
(Verband der Europäischen und Armenischen Fachleute e.V. - VEuAF)
(Եվրոպացի եւ Հայ Մասնագետների Ասոցիացիա հ/կ – ՀԵՄԱ)